ջին գնող այն մեծ եպիսկոպոսն է» (խոսքը Առաքելոց վանքի Եսայի եպիսկոպոսի մասին է, այլապես՝ Արծկեի միաբաններն էին գնելու)։

Եթե Տօնականի թվականը որոշելիս մեզ օգնեց Առաքելոց վանքում գրված Հիշատակարանը, ապա գրչության տեղը որոշելիս նույն դերը կատարում են բուն գրչի հիշատակագրությունները։ Այստեղից իմանում ենք, որ ձեռագրի ստացողը Վասուսի և Հռիփսիմեի որդի՝ պատրոն Աստվածատուրն է (մշեցիների վկայությամբ՝ Բաբերդի ռայիսը), որ սրա եղբայր Ավետիս քահանան շատ է հետևում գրչության գործին, և «բազում հոգաբարձութեամբ նպաստ եղև ի տառս յայս»[49]։ Գրիչը Վարդանն է, որը, մշեցիների վկայությամբ, Կարնո գավառից է։ Սրան օգնում է իր եղբայր Բարսեղը, որը «զաւրինակս պատրաստեաց»[50], հիշվում են մի քանի միաբաններ, իսկ մի գլխագրի մեջ կարդում ենք «Ստեփանոս» անունը։

Այս բոլորից բացի Վարդան գրիչը հիշում է այն ուխտի առաջնորդներին[51], որտեղ օրինակվել է Տօնականը։ Սրանք Մշո Առաքելոց վանքի առաջնորդները չեն, այլ մի ուրիշ վանքի, ուր և տանում են մեզ որոնումները։ Սկսենք Վարդան գրչից։

Վարդան անունով մի գրչի հանդիպում ենք Դարանաղյաց գավառի Ավագ վանքում, որը գրչության նշանավոր կենտրոն էր՝ մեկից ավելի վարժ գրիչներով և ծաղկողներով։ Ահա այդտեղ «յամի Ո որդի յիսներորդի, միով թուով պա[կա]ս (1200) կատարեցաւ գծագրութեամբ սուրբ Աւետարանս... ձեռամբ Վարդանա, յետնեալ և անպիտան կրաւնաւորի, Հրամանաւ և ծախիւք... վերադիտող նահանգիս տէր Սարգսի և եղբաւր Ամբակումա, ի գաւառիս, որ կոչի Դարանաղեաց, ի լերինս Սեպուհ, յորում կան հանգստարան սուրբ Լուսաւորչին՝ առընթեր գոլով վկայուհւոյ բնակութեան և շիրիմի, որ կոչի Մանէ Այրք, որում ողորմեսցի Քրիստոս Աստուած ամենեցուն, ի մենաստանիս, որ կոչի Աւագ վանք՝ առ դրան սրբոյ Աստուածածնիս և սուրբ Կարապետին և սուրբ Առաքելոց, ի մէջ աստուածասէր ճգնաւոր եղբարց, յորում ամրացեալ կան ընդ հովանեաւ սուրբ խորանացս»[52]։

Գրչության վայրը որոշելու հիմնական կռվանը Տօնականի գրիչ Վարդանի վկայություններ են իր ուխտի առաջնորդների և միաբանների վերաբերյալ։ Նա գրում է. «զառաջնորդք սուրբ ուխտիս զՅովհաննէս պատուական ծերն և զՍարգիս, և զԱստուածատուր, որ ի գիրս աւժանդակեաց»[53], կամ «Քրիստոս աստուած, բարեխաւսութեամբ սրբոյն Մամաւայ, ողորմեա՝ պատրոն Աստուածատրին եւ ծնողաց եւ եղբարց եւ քերց իւրոց, ողորմեա եւ հաւր Յովհաննիսի

---

49 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 338ա.

50 Անդ, էջ 27ա, 105բ։

51 Անդ, էջ 358ա։

52 Յիշատակարանք, Ա, էջ 646, հմմտ. Բ. Կյուլեսերյան, Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանին հայոց, Անթիլիաս, 1961, էջ 33։

Ավետարանը մինչև 1605 թ. մնում է Կամախում. այդ թվականին, երբ «եղև հալածումն քրիստոնեից», Գրիգոր վարդապետը Սեթի խնդրանքով, որին պատկանում էր ձեռագիրը, բերում է Կոստանդնուպոլիս և նվիրում սուրբ Նիկողոս եկեղեցուն։ 1848 թ. ձեռագիրը նույն քաղաքի սուրբ Աստուածածին եկեղեցում էր և կոչվում էր «Ծովէն ելած Աւետարան»։ Բ. Կյուլեսերյանը 1897 թ. օրինակում է ձեռագրի հիշատակարանը, իսկ 1902 թ. նկարագրում՝ իբրև Ղալաթիո ազգային Մատենադարանի թիւ 6-րդ ձեռագիր։ Ձեռագիրն այժմ գտնվում է Նյու-Յորքում, Գեորգյան հավաքածուի մեջ։

53 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 323բ։